

**ԿՈԴ**  
**050.0048 Ա. 12.04.19**

**12 ապրիլի 2019 թվականի թիվ 48 Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ  
ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իզ» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները» համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահի  
տեղակալ**

2019 թ. ապրիլի 17  
Երևան

**Ներսես Երիցյան**

Հավելված 1  
Հաստատված է  
Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի խորհրդի  
2019 թվականի ապրիլի 12-ի թիվ 48 Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) կողմից պարբերականների թողարկման և հրապարակման կարգն ու պայմանները:

2. Կենտրոնական բանկի կողմից թողարկվող պարբերականներն են.

1) **«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր» (ամսական)**, որը ներառում է.

ա. Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ և անհատական որոշումները, Կենտրոնական բանկի նախագահի որոշումները, որոնք առնչվում են Կենտրոնական բանկի խնդիրներին ու գործառույթներին, ինչպես նաև այլ իրավական ակտեր,

բ. Վիճակագրական ամփոփագիր:

2) **«Գնաճի հաշվետվություն» (եռամսյակային)**, որը ներառում է.

ա. Դրամավարկային քաղաքականության ծրագիրը (հաջորդ ժամանակաշրջանի համար),

բ. Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (նախորդ ժամանակաշրջանի համար):

3) **«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն»**, որի բովանդակությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 01.02.2014 թվականի թիվ 1/69Ա որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվության կազմման ուղեցույցով»:

4) **«Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» տարեկան հաշվետվությունը**, որը ներառում է.

ա. Նախաբան,

- բ. Ֆինանսական համակարգի վերահսկողությունը և կարգավորումը,
- գ. Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ,
- դ. Վերահսկողությունը 20\*\* թվականին,
- ե. Կադրերի վերապատրաստումը և համագործակցությունը այլ երկրների վերահսկողների հետ,
- զ. ՀՀ ֆինանսական համակարգը 20\*\* թվականին,
- է. Վճարահաշվարկային համակարգ,
- ը. Վերահսկողության զարգացման հեռանկարները,
- թ. Հավելվածներ:

**5) «Ֆինանսական կայունության հաշվեպվություն» (կիսամյակային, տարեկան), որը ներառում է.**

- ա. Նախաբան
- բ. Համաշխարհային տնտեսության զարգացումները,
- գ. Ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական միջավայրում,
- դ. ՀՀ Ֆինանսական շուկայի կայունությունը,
- ե. ՀՀ ֆինանսական հաստատությունները,
- զ. Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառուցյցներում:

**6) «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» (տարեկան), որը ներառում է.**

- ա. Յուրաքանչյուր տարի թողարկվող ՀՀ հուշադրամների մասին տեղեկատվություն,
- բ. Կենտրոնական բանկի հետ տվյալ տարվա ընթացքում համագործակցող դրամահատարանների վերաբերյալ տեղեկատվություն,
- գ. Տվյալ տարվա թողարկման ՀՀ հուշադրամների մասնակցությամբ անցկացված մրցույթների արդյունքները,
- դ. Կենտրոնական բանկի կողմից թողարկված բոլոր հուշադրամների ցանկը՝ ըստ թեմաների և թողարկման տարեթվի,
- ե. ՀՀ հուշադրամների թողարկման հաջորդ տարվա ծրագիրը,
- զ. ՀՀ հուշադրամների հետ առնչվող այլ նյութեր:

3. Կենտրոնական բանկի պարբերականների պատրաստումը, հաստատումը, հրապարակումը, բաշխումը և Կենտրոնական բանկի ինտերնետի տնային էջում տեղադրումն իրականացվում են Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ սահմանված ժամկետներում:

4. Պարբերականների թողարկման պարբերականությունը և լեզուն սահմանվում է համաձայն սույն աղյուսակի.

	Պարբերականի անվանումը	Թողարկման	Լեզուն
--	-----------------------	-----------	--------

		պարբերականությունը	
1	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր	ամսական	հայերեն ռուսերեն անգլերեն
2	Գնաճի հաշվետվություն	եռամսյակային	հայերեն ռուսերեն անգլերեն
3	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն	տարեկան	հայերեն ռուսերեն անգլերեն
4	Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը	տարեկան	հայերեն ռուսերեն անգլերեն
5	Ֆինանսական կայունության հաշվետվություն	կիսամսյակային	հայերեն ռուսերեն անգլերեն
6	Հայաստանի Հանրապետության հուշադրամներ	տարեկան	հայերեն անգլերեն

5. Ոչ հաշվետվական և ոչ նորմատիվ բնույթի նյութերից թարգմանվում են միայն տվյալ նյութերի ամփոփումները: